ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24 նոյեմբերի 2022 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Սեդրակ Բարսեղյանի ընդդեմ Գագիկ Բարսեղյանի և Կարինե Բաղդասարյանի՝ անհիմն հարստացման հիմքով գումար բռնագանձելու պահանջի մասին գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին ՀՀ սնանկության դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Սեդրակ Բարսեղյանը 2016 թվականի փետրվարի 18-ին հայցադիմում է ներկայացրել Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Գագիկ Բարսեղյանի և Կարինե Բաղդասարյանի՝ անհիմն հարստացման հիմքով գումար բռնագանձելու պահանջի մասին:

2. Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

3. Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 10-ի վճռով հայցը մերժվել է:

4. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 24-ի որոշմամբ Սեդրակ Բարսեղյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝

Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 10-ի վճիռն ամբողջությամբ բեկանվել և փոփոխվել է. հայցը բավարարվել է մասնակիորեն, որոշվել է Գագիկ Բարսեղյանից և Կարինե Բաղդասարյանից հօգուտ Սեդրակ Բարսեղյանի բռնագանձել 221.864.000 ՀՀ դրամ, ինչպես նաև սկսած 2015 թվականի դեկտեմբերի 23-ից մինչև պարտավորության փաստացի դադարումը՝ 221.864.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվեգրվող տոկոսները:

5. ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի՝ 2022 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ Գագիկ Բարսեղյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակի. մասնակիորեն բեկանվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 24-ի որոշումը՝ անհիմն հարստացման գումարի չափի և դրա նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվեգրվող տոկոսները բռնագանձելու և այդ մասերով դատական ծախսերը բաշխելու մասը, և գործն այդ մասերով ուղարկվել է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

6. Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի մայիսի 18-ի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և նշանակվել է նախնական դատական նիստ:

7. Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ քաղաքացիական գործը հանձնվել է ՀՀ սնանկության դատարանի քննությանը:

8. Սնանկության դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

9. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի նոյեմբերի 17-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

10. Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ վարույթ է ընդունվել Սեդրակ Բարսեղյանի հայցադիմումն ընդդեմ Գագիկ Բարսեղյանի և Կարինե Բաղդասարյանի,

որով Սեդրակ Բարսեղյանը պահանջել է բռնագանձել 246.517.000 ՀՀ դրամ, ինչպես նաև սկսած 2015 թվականի դեկտեմբերի 23-ից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը՝ 246.517.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվեգրվող տոկոսները[1]:

11. Թիվ ԱՐԱԴ/0018/04/18 սնանկության գործով Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 10-ի վճռով Սեդրակ Բարսեղյանը ճանաչվել է սնանկ[2]:

12. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին, Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է Սնանկության դատարան՝ հետևյալ հիմնավորմամբ. *«(…) [Ն]կատի ունենալով, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումների համաձայն սնանկության դատարանի կողմից գործի քննության համար անհրաժեշտ պայման է վեճի առնչությունը ոչ միայն սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքին, այլև իրավունքներին, ուստի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում, Դատարանը եզրահանգում է, որ սույն քաղաքացիական գործն ուղղակիորեն առնչվում է պարտապանի գույքի կազմում ներառված գույքին, որի պայմաններում առաջին պայմանն առկա է: (…) [Ն]երկայացված հայցապահանջի հնարավոր բավարարման դեպքում Դատարանը հօգուտ Հայցվորի բռնագանձելու է որոշակի գումար, որն էլ ներառվելու է վերջինիս գույքային զանգվածի կազմում, որի հաշվին էլ առաջանալու է սնանկության վարույթում պարտատերերի պահանջների բավարարման հնարավորություն: Այսինքն, քաղաքացիական գործով կայացված դատական ակտն ուղղակիորեն ազդելու է սույն գործով Հայցվորի (սնանկության վարույթով պարտապանի) գույքի ծավալի վրա, և ըստ այդմ նաև սնանկության վարույթում պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա: Այսինքն, երկրորդ պայմանը ևս առկա է: Ինչ վերաբերում է, սնանկության վարույթի*

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 1, թերթեր 3-10, հատոր 2, թերթեր 74-78:
[2] Տե՛ս www.datalex.am տեղեկատվական համակարգ, գործ թիվ ԱՐԱԴ/0018/04/18:

քննության փուլում գտնվելու և ավարտված չլինելու պայմանին, ապա այն ևս պահպանված է»[3]*:*

13. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասին, մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին՝ Սնանկության դատարանը 2022 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«Տվյալ դեպքում, ինչպես թիվ ԱՐԱԴ/0018/04/18 սնանկության գործը, այնպես էլ թիվ ԱՐԱԴ2/0077/04/16 քաղաքացիական գործը հարուցվել են մինչև ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը, հետևաբար, դատարանը գտնում է, որ սույն հարցը լուծելիս ենթակա է կիրառման մինչև ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը գործող նորմերը: (...) Դատարանը փաստում է, որ սույն հայցապահանջով պատասխանող է հանդիսանում Գագիկ Գառնիկի Բարսեղյանը, մինչդեռ թիվ ԱՐԱԴ/0018/04/18 սնանկության գործով պարտապանը Մեդրակ Մարտունիկի Բարսեղյանն է, որին սույն հայցադիմումով որևէ նյութաիրավական պահանջ չի ներկայացվել: Ավելին, վերջինս սույն քաղաքացիական գործով հայցվորն է: Այսինքն՝ պարտապանը սույն քաղաքացիաիրավական վեճով չի հանդիսանում պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ: Դատարանը փաստում է նաև, որ սույն քաղաքացիական գործով վեճը չի ծագել թիվ ԱՐԱԴ/0018/04/18 սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ: Հետևաբար դատարանը գտնում է, որ բացակայում է մինչև ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը*

[3] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 8, թերթեր 62-65:

գործող 4-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնակարգումների հիման վրա թիվ ԱՐԱԴ/0018/04/18 սնանկության գործի շրջանակներում թիվ ԱՐԱԴ2/0077/04/16 քաղաքացիական գործը քննելու հնարավորությունը»[4]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *արդյո՞ք առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով ամրագրված նախապայմանները՝ թիվ ԱՐԱԴ2/0077/02/16 քաղաքացիական գործը Սնանկության դատարանի կողմից քննության առնելու համար*:

15. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում»:*

Մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում»:*

2020 թվականի ապրիլի 15-ին ուժի մեջ մտած՝ ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումը վերանայվել է և նույն հոդվածի 3-րդ մասում սահմանվել է հետևյալ կարգավորումը. «*Սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված,*

[4] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 8, թերթեր 70-77:

ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործեր»:

16. Սույն որոշման նախորդ կետում վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործերը, որպես կանոն, ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում: Այս ընդհանուր կանոնից բացառություն է սահմանված սնանկության գործերի համար, որոնց վարումն իրականացնում է Սնանկության դատարանը: Սնանկության դատարանը միաժամանակ իրականացնում է նաև սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունեցող այն քաղաքացիաիրավական վեճերի քննությունը, որոնք համապատասխանում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախապայմաններին:

Գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործը ենթակա է քննության սնանկության դատարանում, սնանկության գործը վարող դատավորի կողմից, նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործ՝ հետևյալ նախապայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) քաղաքացիաիրավական վեճը պետք է ծագած լինի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված օբյեկտներից որևէ մեկի առնչությամբ,

բ) վեճի լուծումը պետք է ազդի պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա,

գ) սնանկության գործը պետք է գտնվի քննության փուլում, այսինքն՝ սնանկության գործի վարույթը պետք է ավարտված չլինի:

17. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

-Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ վարույթ է ընդունվել Սեդրակ Բարսեղյանի հայցադիմումն ընդդեմ Գագիկ Բարսեղյանի և Կարինե Բաղդասարյանի, որով Սեդրակ Բարսեղյանը պահանջել է բռնագանձել 246.517.000 ՀՀ դրամ, ինչպես նաև սկսած 2015

թվականի դեկտեմբերի 23-ից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը՝ 246.517.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվեգրվող տոկոսները[5],

- թիվ ԱՐԱԴ/0018/04/18 սնանկության գործով Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 10-ի վճռով Սեդրակ Բարսեղյանը ճանաչվել է սնանկ[6],

-հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին՝ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է Սնանկության դատարան՝ նշելով, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումների համաձայն, սնանկության դատարանի կողմից գործի քննության համար անհրաժեշտ պայման է վեճի առնչությունը ոչ միայն սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքին, այլև իրավունքներին, ուստի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում, սույն քաղաքացիական գործն ուղղակիորեն առնչվում է պարտապանի գույքի կազմում ներառված գույքին, որի պայմաններում առաջին պայմանն առկա է: Միաժամանակ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշել է, որ ներկայացված հայցապահանջի հնարավոր բավարարման դեպքում, դատարանը հօգուտ հայցվորի բռնագանձելու է որոշակի գումար, որն էլ ներառվելու է վերջինիս գույքային զանգվածի կազմում, որի հաշվին էլ առաջանալու է սնանկության վարույթում պարտատերերի պահանջների բավարարման հնարավորություն: Այսինքն, քաղաքացիական գործով կայացված դատական ակտն ուղղակիորեն ազդելու է սույն գործով հայցվորի (սնանկության վարույթով պարտապանի) գույքի ծավալի վրա, և ըստ այդմ՝ նաև սնանկության վարույթում պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա: Այսինքն, երկրորդ պայմանը ևս առկա է: Անդրադառնալով սնանկության վարույթի քննության փուլում գտնվելու և ավարտված չլինելու պայմանին,

[5] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը փաստել է, որ այն ևս պահպանված է[7],

-հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասին, մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին՝ Սնանկության դատարանը 2022 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով որ տվյալ դեպքում, ինչպես թիվ ԱՐԱԴ/0018/04/18 սնանկության գործը, այնպես էլ թիվ ԱՐԱԴ2/0077/02/16 քաղաքացիական գործը հարուցվել են մինչև ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը, հետևաբար սույն հարցը լուծելիս ենթակա են կիրառման մինչև նշված օրենքի ուժի մեջ մտնելը գործող նորմերը: Միաժամանակ Սնանկության դատարանը փաստել է, որ սույն հայցապահանջով պատասխանող է հանդիսանում Գագիկ Գառնիկի Բարսեղյանը, մինչդեռ թիվ ԱՐԱԴ/0018/04/18 սնանկության գործով պարտապանը Սեդրակ Մարտունիկի Բարսեղյանն է, որին սույն հայցադիմումով որևէ նյութաիրավական պահանջ չի ներկայացվել: Ավելին, վերջինս սույն քաղաքացիական գործով հայցվորն է: Այսինքն՝ պարտապանը սույն քաղաքացիաիրավական վեճով չի հանդիսանում պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ: Սնանկության դատարանը գտել է, որ սույն քաղաքացիական գործով վեճը չի ծագել թիվ ԱՐԱԴ/0018/04/18 սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ, հետևաբար բացակայում է մինչև ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնակարգումների

[7] Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

հիման թիվ ԱՐԱԴ/0018/04/18 սնանկության գործի շրջանակներում թիվ ԱՐԱԴ2/0077/02/16 քաղաքացիական գործը քննելու հնարավորությունը[8]:

18. Վերը շարադրված փաստերից հետևում է, որ թիվ ԱՐԱԴ2/0077/02/16 քաղաքացիական գործը, որով հայցվոր է հանդիսանում թիվ ԱՐԱԴ/0018/04/18 սնանկության գործով սնանկ ճանաչված պարտապան Սեդրակ Բարսեղյանը, հարուցվել է 2016 թվականի սեպտեմբերի 19-ին:

««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածով փոփոխության է ենթարկվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի «Սնանկության գործերի ենթակայությունը» վերտառությամբ 4-րդ հոդվածը, ուժի մեջ է մտել 2020 թվականի ապրիլի 15-ից:

Հարկ է նշել, որ ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի «*Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ*» վերտառությամբ 72-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ «*Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում հարուցված՝ նույն օրենքի 3-րդ հոդվածին համապատասխանող գործերը նույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, փոխանցվում են դատարան*»:

Վկայակոչված իրավանորմի մեկնաբանությունից բխում է, որ թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքով կատարված լրացումներով և փոփոխություններով «Սնանկության մասին» ՀՀ օրենքը գործողության մեջ դրվելուց հետո, սնանկության գործի հետ կապված և դրա վրա ազդեցություն ունեցող քաղաքացիական գործերը պետք է փոխանցվեն ՀՀ սնանկության դատարան և քննվեն տվյալ սնանկության գործը քննող դատավորի վարույթում՝ որպես տվյալ սնանկության գործի շրջանակներում քննվող առանձին գործեր: Հետևաբար, քննարկվող դրույթով սահմանված պահանջը վերաբերում է թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի ընդունման դրությամբ արդեն իսկ հարուցված քաղաքացիական գործերին՝ նպատակ ունենալով որոշակիացնել դրանց քննության հետագա կարգը:

Նման պայմաններում, նկատի ունենալով, որ թիվ ԱՐԱԴ2/0077/02/16 քաղաքացիական գործը հարուցվել է 2016 թվականի սեպտեմբերի 19-ին, այսինքն՝ մինչև ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և

[8] Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի ընդունումը, պետք է փաստել, որ նույն օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 72-րդ հոդվածի 10-րդ մասը կիրառելի է նաև թիվ ԱՐԱԴ2/0077/02/16 քաղաքացիական գործի նկատմամբ, ինչից էլ բխում է, որ գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխանելու դեպքում այն պետք է քննվի Սնանկության դատարանի կողմից:

Քննարկելով սույն որոշման 16-րդ կետում վերլուծված՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վավերապայմանների առկայության հարցը, պետք է փաստել, որ՝

ա) սույն քաղաքացիաիրավական վեճը ծագել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված օբյեկտի, այն է՝ սնանկ ճանաչված Սեդրակ Բարսեղյանի գույքային իրավունքների առնչությամբ,

բ) սույն վեճի լուծումը ազդեցություն է ունենալու սնանկության վարույթի շրջանակներում պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա,

գ) թիվ ԱՐԱԴ/0018/04/18 սնանկության գործը գտնվում է քննության փուլում, այսինքն՝ սնանկության գործի վարույթը դեռևս ավարտված չէ:

19. Վերոշարադրյալի հիման վրա, գտնում եմ, որ առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նախապայմանները՝ Սեդրակ Բարսեղյանի հայցադիմումի հիման վրա թիվ ԱՐԱԴ2/0077/02/16 քաղաքացիական գործը Սնանկության դատարանի կողմից քննության առնելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԱՐԱԴ2/0077/02/16 քաղաքացիական գործը՝ ըստ հայցի Սեդրակ Բարսեղյանի ընդդեմ Գագիկ Բարսեղյանի և Կարինե Բաղդասարյանի՝ անհիմն հարստացման հիմքով գումար բռնագանձելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ սնանկության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ